ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան 10 փետրվարի 2020թ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը, այսուհետ «Բանկ» ի դեմս վարչության նախագահ Արտավազդ Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, ում անունից համաձայն վարչության նախագահի կողմից 27.11.2018թ. տրված թիվ 8159-02 լիազորագրի հանդես է գալիս Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ Արմինե Սահակյանը և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը, այսուհետ՝ «ԲՈՒՀ», ի դեմս տնօրենի ժ/պ Ա.Մակարյանի, որը գործում է «ԲՈՒՀ»-ի կանոնադրության հիման վրա, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.3 Սույն պայմանագրով Բանկը պարտավորվում է կազմակերպել ԲՈՒՀ-ի ուսանողների ուսումնական պրակտիկան՝ ԲՈՒՀ-ի համապատասխան միջնորդագրի և ներկայացված ուսանողների ցուցակի հիման վրա, սույն պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում, իսկ ԲՈՒՀ-ը պարտավորվում է փոխհատուցել Բանկին ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպելու համար:

ԲԱԺԻՆ 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.6 Բանկը պարտավոր է՝

2.6.1 կազմակերպել ԲՈՒՀ-ի ուսանողների ուսումնական պրակտիկան իր մոտ ընդունված ներքին ակտերին համապատասխան.

2.6.2 ԲՈՒՀ-ի հետ համատեղ քննարկել ուսանողների ուսումնական պրակտիկան կազմակերպելու հետ կապված առաջարկությունները.

2.6.3 ուսանողների ուսումնական պրակտիկայի ժամկետն ավարտվելուց հետո ուսանողի կողմից ներկայացված ուսումնական պրակտիկայի վերաբերյալ գրքույկում/օրագրում/ կատարել համապատասխան գրառումներ՝ ապահովելով ուսումնական պրակտիկայի կազմակերպման համար նշանակված ղեկավարների ստորագրությունները և տրամադրելով բնութագիրը:

2.7 Բանկն իրավունք ունի՝

2.7.1 միակողմանի դադարեցնել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք գրավոր տեղեկացնելով «ԲՈՒՀ»-ին.

2.7.2 ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից Բանկում ընդունված ներքին ակտերի խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ դադարեցնել կարգազանց ուսանողների ուսումնական պրակտիկան ու այդ մասին մեկօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել «ԲՈՒՀ»-ին՝ առանց նախօրոք վճարված փոխհատուցման գումարը ԲՈՒՀ-ին կամ ուսանողին վերադարձնելու:

2.8 ԲՈՒՀ-ը պարտավոր է՝

2.8.1 իր կամ ուսանողների միջոցներով փոխհատուցել Բանկին ուսանողների ուսումնական պրակտիկայի կազմակերպման ու անցկացման համար.

2.8.2 ուսանողներին նախօրոք հրահանգավորել Բանկում գտնվելու ընթացքում վարվելակերպի ու վարքագծի կանոնները, ուսումնական պրակտիկայի ընթացքում նրանց ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները.

2.8.3 երաշխավորել ուսանողների կողմից ուսումնական պրակտիկայի ընթացքում իրեն հայտնի դարձած բոլոր տեղեկությունների գաղտնիության պահպանումը.

2.8.4 ուսանողների ուսումնական պրակտիկայի ուղարկելիս Բանկին ներկայացնել գրավոր միջնորդագիր, այն ուսանողների ցուցակները, որոնց ուսումնական պրակտիկան կազմակերպվելու է Բանկում և յուրաքանչյուր ուսանողի համար սահմանված փոխհատուցման գումարի վճարումը հաստատող վճարահաշվարկային փաստաթուղթ ոչ ուշ, քան ուսումնական պրակտիկայի կազմակերպման օրվանից յոթից տասն օր առաջ.

2.8.5 ուսանողների ցուցակները ներկայացնելիս նշել յուրաքանչյուր ուսանողի մասնագիտական ուսումնառության առարկան և ուսումնական պրակտիկայի գործողության ժամկետը, ինչպես նաև Բանկի պահանջով այլ անհրաժեշտ տեղեկություններ:

2.9 ԲՈՒՀ-ն իրավունք ունի.

2.9.1 պահանջել Բանկից պատշաճ կազմակերպելու ուսանողների ուսումնական պրակտիկան.

2.9.2 ուսանողներից ստացված ուսումնական պրակտիկայի վերաբերյալ բողոք-գանգատների վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկություններն անհապաղ հայտնել Բանկին.

2.10 Բանկը չի երաշխավորում ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողների ստացած և սովորած մասնագիտական գիտելիքների մակարդակի բարելավման, բարձրացման համար:

ԲԱԺԻՆ 3. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 ԲՈՒՀ-ը ուսումնական պրակտիկայի համար Բանկին վճարում է յուրաքանչյուր ուսանողի համար/թվով երկու ուսանող/ 3000.00/երեք հազար/ ՀՀ դրամ, ընդամենը 6000.00/վեց հազար/ ՀՀ դրամ, ներառյալ բոլոր տեսակի հարկերը:

3.2 Փոխհատուցման գումարը վճարվում է կանխիկ՝ Բանկի դրամարկղ մուծելու միջոցով՝ Բանկի թիվ 1150038340137200 տարանցիկ հաշվին:

ԲԱԺԻՆ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2020 թվականի փետրվարի 10-ից և գործում է մինչև մարտի 06–ը:

4.2 Սույն պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որի վերաբերյալ կազմում և ստորագրվում է լրացուցիչ համաձայնագիր:

4.3 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել միակողմանիորեն՝ ցանկացած Կողմի պահանջով առանց մյուս կողմին որևէ պահանջ ներկայացնելու:

ԲԱԺԻՆ 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքերում կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Բանկը պատասխանատվություն չի կրում ուսումնական պրակտիկայի ուղարկված ուսանողների հաճախումների համար:

ԲԱԺԻՆ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն կողմերի համաձայնությամբ՝ համաձայնագրերի կնքման միջոցով:

6.2 Սույն պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Բանակցությունների միջոցով ծագած վեճերն ու տարաձայնությունները չլուծվելու դեպքում վեճերի լուծումն իրականացվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է 2/երկու/ օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

ԲԱԺԻՆ 6. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

ԲԱՆԿ	ԲՈՒՀ
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	«Երևանի պետական համալսարան»
ք.Երևան, Նալբանդյան 48	Հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի
ՀՎՀՀ 01500362	տնօրենի ժ/պ
Լիազորված անձ՝	/ք.Իջևան, Ուսանողական 3/
Մարդկային ռեսուրսների կառավարման	
վարչության պետ	Ա.Մակարյան
Արմինե Սահակյան	
ստորագրություն	ստորագրություն